Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 30. 01. 2019 թ.
նիստում (արձ. թիվ 2)
Ամբիոնի պետ՝ .....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Պետության և իրավունքի տեսություն 2
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության եվ իրավունքի տեսության եվ սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Հ. Քոչարյան (ի.գ.թ.), Ա. Մարգարյան E-mail: rmarandyan@mail.ru, abgarmargaryan@mail.ru, հեռ. 055 52 26 33
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**4 (չորս)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Պետության և իրավունքի տեսություն 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 120 ժամ, որից 36 ժամ դասախոսություն, 36 ժամ սեմինար պարապմունք, 48 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը չորս լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է հանրակրթական ավագ դպրոցում «Հասարակագիտություն» առարկայից ձեռք բերված գիտելիքների հիման վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Պետության և իրավունքի տեսություն 2» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են իրավունքի հասկացությունը, էությունը, արժեքը, իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և տեսակները, իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցությունը, սոցիալական կարգավորման հասկացությունը, սոցիալական կարգավորիչների տեսակները և գործառույթները, իրավունքի, բարոյականության և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցությունը, իրավունքի գործառույթների հասկացությունը, սոցիալական նշանակությունը և համակարգը, իրավական նորմի հասկացությունը, կառուցվածքը, տեսակները, իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները, իրավունքի համակարգի հասկացությունը, կառուցվածքը, հանրային և մասնավոր, միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցությունը, իրավահարաբերության հասկացությունը, տեսակները, կառուցվածքային տարրերը, իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները, իրավագիտակցության հասկացությունը, կառուցվածքը, տեսակները, իրավական մշակույթը, իրավական ժխտողականությունը և գաղափարապաշտությունը, իրավաբանական կրթությունը, իրավական վարքագծի հասկացությունը, տեսակները և իրավաբանական պատասխանատվությունը պետական հարկադրանքի համակարգում:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ իրավունքի հասկացության, էության, արժեքի, իրավունքի սկզբունքների հասկացության, նշանակության և տեսակների, իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցության, սոցիալական կարգավորման հասկացության, սոցիալական կարգավորիչների տեսակների և գործառույթների, իրավունքի, բարոյականության և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցության, իրավունքի գործառույթների հասկացության, սոցիալական նշանակության և համակարգի, իրավական նորմի հասկացության, կառուցվածքի, տեսակների, իրավունքի աղբյուրի հասկացության և տեսակների, իրավունքի համակարգի հասկացության, կառուցվածքի, հանրային և մասնավոր, միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության, իրավահարաբերության հասկացության, տեսակների, կառուցվածքային տարրերի, իրավաբանական փաստի հասկացության և տեսակների, իրավագիտակցության հասկացության, կառուցվածքի, տեսակների, իրավական մշակույթի, իրավական ժխտողականության և գաղափարապաշտության, իրավաբանական կրթության, իրավական վարքագծի հասկացության, տեսակների և պետական հարկադրանքի համակարգում իրավաբանական պատասխանատվության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել իրավունքի հասկացությունը, էությունը, արժեքը, • ուսումնասիրել իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և տեսակները, իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցությունը, • սահմանել սոցիալական կարգավորման հասկացությունը, • ուսումնասիրել սոցիալական կարգավորիչների տեսակները և գործառույթները, իրավունքի, բարոյականության և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցությունը, • սահմանել իրավունքի գործառույթների հասկացությունը, ուսում-

		նասիրել դրանց սոցիալական նշանակությունը և համակարգը, • սահմանել իրավական նորմի հասկացությունը, ներկայացնել դրա կառուցվածքը և տեսակները, • ուսումնասիրել իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակնե-րը, • սահմանել իրավունքի համակարգի հասկացությունը, • վեր հանել իրավունքի համակարգի կառուցվածքը, հանրային և մասնավոր, միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակ-ցությունը, • սահմանել իրավահարաբերության հասկացությունը, ուսումնասի-րել դրա տեսակները, կառուցվածքային տարրերը, իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները, • սահմանել իրավագիտակցության հասկացությունը, ուսումնասի-րել դրա կառուցվածքը, տեսակները, իրավական մշակույթը, իրավական ժխտողականությունը, գաղափարապաշտությունը և իրավաբանական կրթությունը, • սահմանել իրավական վարքագծի հասկացությունը, ուսումնասի-րել դրա տեսակները, • ուսումնասիրել իրավաբանական պատասխանատվությունը պե-տական հարկադրանքի համակարգում:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1. սահմանել իրավունքի հասկացությունը, վերլուծել դրա հատկա-նիշները, բացահայտել իրավունքի էությունը և արժեքը, 2. սահմանել իրավունքի սկզբունքների հասկացությունը, ներկայաց-նել դրանց տեսակները, վերլուծել իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցությունը, 3. բացահայտել սոցիալական կարգավորման համակարգում իրա-վունքի տեղը և դերը, 4. սահմանել իրավունքի գործառույթների հասկացությունը, ներկա-յացնել դրանց համակարգը, 5. սահմանել իրավական նորմի հասկացությունը, ներկայացնել դրա կառուցվածքը և տեսակները, 6. սահմանել իրավունքի աղբյուրի հասկացությունը, ներկայացնել դրա տեսակները, 7. սահմանել իրավունքի համակարգի հասկացությունը, ներկայաց-նել դրա կառուցվածքը, տարբերակել հանրային և մասնավոր, միջազգա-յին և ներպետական իրավունքները, 8. սահմանել իրավահարաբերության հասկացությունը, ներկայաց-նել դրա տեսակները և կառուցվածքը, 9. սահմանել իրավագիտակցության հասկացությունը, ներկայացնել դրա կառուցվածքը, տեսակները, իրավական մշակույթը, 10. սահմանել իրավական վարքագծի հասկացությունը, ներկայացնել դրա տեսակները, 11. մատնանշել պետական հարկադրանքի համակարգում իրավաբա-նական պատասխանատվության առանձնահատկությունները, ներկայաց-նել իրավաբանական պատասխանատվության սկզբունքները տեսակնե-րը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Երևան, «Լուսաբաց» հրատ, 2014, 692

		էջ, 2. Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռնարկ / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, «Լուսաբաց» հրատ, 2016, 628 էջ, 3. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1 / Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2013, 224 էջ, 4. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն - 1 / Դասախոսություններ, ԵՊՀ, Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, 280 էջ, 5. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. Курс лекций. М., Изд-во «Юристь», 1997, 672 стр. 6. Хропанюк В. Н., Теория государства и права / Учебник, 3-е изд., доп. и испр., М., Изд-во «Омега-Л», 2008, 384 стр., 7. Общая теория права и государства: Учебник для вузов / В. С. Нерсесянц, М., Изд-во «Норма: НИЦ ИНФРА-М», 2015, 560 стр.:
Լրացուցիչ		1. Վաղարշյան Ա., «Իրավունք» հասկացության տեսամեթոդական և գործնական նշանակությունը // «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», Երևան, 2014, 144.3, (№ 3), էջեր 3-13, 2. Վաղարշյան Ա., Իրավունքի աղբյուրների ու իրավական կարգավորման միջոցների հարաբերակցությունը և հասարակական հարաբերությունների կարգավորման ստորակարգությունը // Պետություն և իրավունք, Երևան, 2006, թիվ 2-3 (32-33), էջեր 5-11, 3. Керимов Д.А. Проблемы общей теории государства и права: Учеб. пособие, М., 2000. 179 стр., 4. Лебедев В. А. // Государственная власть как форма выражения публичной власти / Вестник Челябинского государственного университета, 2010, № 25 (206) Право, Вып 25, стр. 5-9, 5. Мелехин А. В., Теория государства и права: Учебник, М., Маркет ДС, 2007, 640 стр., 6. Венгеров А. Б., Теория государства и права: Учебник для юридических вузов. 3-е изд., М., Юриспруденция, 2000, 528 стр, 7. Матузов Н. И., Малько А. В. Теория государства и права. М., Изд-во «Юристъ», 2004, 512 стр., 8. Абдулаев М. И., Теория государства и права: Учебник для высших учебных заведений, М., Финансовый контроль, 2004, 410 стр.:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Քննություն («Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»):
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է հիմնավորում պատասխանը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.

		բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է տեսական դրույթները ճիշտ տեղայնացնել կոնկրետ օրինակներում. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Իրավունքի հասկացությունը և էությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքի հասկացությունը և հատկանիշները 2. Իրավունքի էությունը 3. Իրավունքի արժեքը	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 1 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում իրավունքի հիմնական հատկանիշները: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են իրավունքի հասկացությունը, էությունը և արժեքը, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 2 **Իրավունքի սկզբունքները** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը 2. Իրավունքի սկզբունքների տեսակները 3. Իրավունքի սկզբունքներ և իրավական աքսիոմա-ներ	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն: Հարց 3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցության վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը, տեսակները, իրավունքի սկզբունքների և իրավական աքսիոմաների հարաբերակցությու-նը, կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 3 **Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1. Սոցիալական կարգավորման հասկացությունը, սոցիալական կարգավորիչների տեսակները և գործառույթները 2. Իրավունքի և բարոյականության հարաբերակցությունը 3. Իրավունքի և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցությունը	Հարցեր 1- 3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 – ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում են իրավունքի՝ բարոյականության և սոցիալական այլ կարգավորիչների հետ ունեցած հարաբերակցության առավել կարևոր հիմնախնդիրները՝ դրանց լուծման սեփական դիրքորոշումներով: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են սոցիալական կարգավորման հասկացությունը, սոցիալական կարգավորիչների տեսակները, գործառույթները, իրավունքի և սոցիալական այլ նորմերի հարաբերակցությունը, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների հարցում և ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 4 **Իրավունքի գործառույթները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքի գործառույթների հասկացությունը և սոցիալական նշանակությունը 2. Իրավունքի գործառույթների համակարգը 3. Իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթների ընդհանուր բնութագիրը	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում իրավունքի գործառույթների սահմանման և «իրավունքի դեր», «իրավունքի խնդիր» ու «իրավունքի գործողություն» հասկացություններից դրանց տարանջատման հիմնախնդիրներն ու այդ կապակցությամբ սեփական մոտեցումները: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները, կատարվում է նրանց գիտելիքների ստուգում հարցման միջոցով:

Թեմա 5 **Իրավական նորմ** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավական նորմի հասկացությունը և հատկանիշները 2. Իրավական նորմի կառուցվածքը 3. Իրավական նորմերի տեսակները	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, ուսումնասիրում իրավական նորմի հատկանիշները և սոցիալական այլ նորմերի հետ հարաբերակցությունը: Հարցեր 1-3. Սեմինար պարապմունք: Կատար-

	վում է սովորողների գիտելիքների ստուգում հարցման եղանակով: Խմբային քննարկման միջոցով ամփոփվում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 6 **Իրավունքի աղբյուրները** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները 2. Նորմատիվ իրավական ակտ 3. Նորմատիվ պայմանագիր 4. Դատական նախադեպ 5. Իրավական սովորույթ 6. Իրավական դոկտրինը	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-6 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը և դասախոսին ներկայացնում ժամանակակից պայմաններում իրավունքի նշված աղբյուրների առանձնահատկությունների վերաբերյալ տեսական մոտեցումները և այդ կապակցությամբ սեփական դիրքորոշումները: Հարցեր 1-6 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակներից յուրաքանչյուրը, կատարվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 7 **Իրավունքի համակարգը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավունքի համակարգի հասկացությունը և կառուցվածքային տարրերը 2. Հանրային իրավունք և մասնավոր իրավունք 3. Միջազգային իրավունք և ներպետական իրավունք	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, կատարում են հանրային և մասնավոր, միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության վերլուծություն, ներկայացնում են սեփական դիրքորոշումներն այդ կապակցությամբ: Հարցեր 1-3: Սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են թեման, ինչպես նաև՝ կազմակերպվում է ինքնուրույն աշխատանքի արդյունքների խմբային քննարկում:

Թեմա 8 **Իրավահարաբերություն** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավահարաբերություն հասկացությունը և հատկանիշները 2. Իրավահարաբերության տեսակները 3. Իրավահարաբերություն սուբյեկտ: Իրավասուբյեկ-	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը և դրա վերլուծության հիման վրա դա-

տություն 4. Իրավահարաբերության օբյեկտ 5. Իրավահարաբերություն բովանդակություն 6. Իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները	սախոսին ներկայացնում իրավահարաբերության կառուցվածքային տարրերի վերաբերյալ տեսական մոտեցումները և այդ կապակցությամբ սեփական դիրքորոշումները: Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 9 **Իրավագիտակցություն, իրավական մշակույթ և իրավաբանական կրթություն** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավագիտակցության հասկացությունը, կառուցվածքը և տեսակները 2. Իրավական մշակույթ 3. Իրավական ժխտողականություն (նիհիլիզմ) և գաղափարապաշտություն (իդեալիզմ) 4. Իրավաբանական կրթություն	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-4 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում իրավական մշակույթի, իրավական ժխտողականության և գաղափարապաշտության ձևավորման վրա ազդող գործոնները, իրավաբանական կրթության արդի հիմնախնդիրները և ներկայացում իրենց դիրքորոշումները քննարկվող հարցերի կապակցությամբ: Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 10 **Իրավական վարքագիծ** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Իրավական վարքագծի հասկացությունը և տեսակները 2. Իրավաչափ վարքագծի հասկացությունը և տեսակները 3. Իրավախախտման հասկացությունը, կազմը և տեսակները 4. Իրավունքի չարաշահում 5. Օբյեկտիվորեն հակաիրավական (առանց մեղքի) վարքագիծ	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են իրավախախտման, իրավունքի չարաշահման և օբյեկտիվորեն հակաիրավական (առանց մեղքի) վարքագծի առանձնահատկությունների և տարբերակման վերաբերյալ տեսական մոտեցումներին, ներկայացնում են իրենց դիրքորոշումները նշված հարցերի կապակցությամբ: Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 11 **Իրավաբանական պատասխանատվությունը պետական հարկադրանքի համակարգում** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետական հարկադրանքի հասկացությունը, հատկանիշները և տեսակները 2. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, հատկանիշները և նպատակները 3. Իրավաբանական պատասխանատվության սկզբունքները 4. Իրավաբանական պատասխանատվության տեսակները	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում պետական հարկադրանքի և իրավաբանական պատասխանատվության հարաբերակցության հիմնախնդիրները, ներկայացում են իրենց դիրքորոշումներն այդ կապակցությամբ: Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Հարցաշար
«Պետության և իրավունքի տեսություն 2» դասընթացի քննության

1. Իրավունքի հասկացությունը և հատկանիշները
2. Իրավունքի էությունը
3. Իրավունքի արժեքը

4. Իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը
5. Իրավունքի սկզբունքների տեսակները
6. Իրավունքի սկզբունքներ և իրավական աքսիոմաներ
7. Սոցիալական կարգավորման հասկացությունը, սոցիալական կարգավորիչների տեսակները և գործառույթները
8. Իրավունքի և բարոյականության հարաբերակցությունը
9. Իրավունքի և սոցիալական այլ կարգավորիչների հարաբերակցությունը
10. Իրավունքի գործառույթների հասկացությունը և սոցիալական նշանակությունը
11. Իրավունքի գործառույթների համակարգը
12. Իրավունքի հատուկ իրավաբանական գործառույթների ընդհանուր բնութագիրը
13. Իրավական նորմի հասկացությունը և հատկանիշները
14. Իրավական նորմի կառուցվածքը
15. Իրավական նորմերի տեսակները
16. Իրավունքի աղբյուրի հասկացությունը և տեսակները
17. Նորմատիվ իրավական ակտ
18. Նորմատիվ պայմանագիր
19. Դատական նախադեպ
20. Իրավական սովորույթ
21. Իրավական դոկտրինը
22. Իրավունքի համակարգի հասկացությունը և կառուցվածքային տարրերը
23. Հանրային իրավունք և մասնավոր իրավունք
24. Միջազգային իրավունք և ներպետական իրավունք
25. Իրավահարաբերության հասկացությունը և հատկանիշները
26. Իրավահարաբերության տեսակները
27. Իրավահարաբերության սուբյեկտ: Իրավասուբյեկտություն
28. Իրավահարաբերության օբյեկտ
29. Իրավահարաբերության բովանդակություն
30. Իրավաբանական փաստի հասկացությունը և տեսակները
31. Իրավագիտակցության հասկացությունը, կառուցվածքը և տեսակները
32. Իրավական մշակույթ
33. Իրավական ժխտողականություն (նիհիլիզմ) և գաղափարապաշտություն (իդեալիզմ)
34. Իրավաբանական կրթություն
35. Իրավական վարքագծի հասկացությունը և տեսակները
36. Իրավաչափ վարքագծի հասկացությունը և տեսակները
37. Իրավախախտման հասկացությունը, կազմը և տեսակները
38. Իրավունքի չարաշահում
39. Օբյեկտիվորեն հակաիրավական (առանց մեղքի) վարքագիծ
40. Պետական հարկադրանքի հասկացությունը, հատկանիշները և տեսակները
41. Իրավաբանական պատասխանատվության հասկացությունը, հատկանիշները և նպատակները
42. Իրավաբանական պատասխանատվության սկզբունքները
43. Իրավաբանական պատասխանատվության տեսակները